

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՀՈՎԱԾՔ ԷՄԻՆԸ ԵՎ ԱՆԳԼԻԱՑԻ ԱՐԵՎԵԼԱԳԵՏ ՌԵԻԼՏԱՄ ԶՈՆՍԸ

Մ. Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

XVIII դարի հայ ազգային-ազատագրական շարժման պատմության կարե-
վորագույն վավերագրերից է 1792 թ. Լոնդոնում լույս տեսած Հովսեփ Էմինի
«Իմ կյանքը և արկածները» գիրքը¹։ Իր գաղափարախոսությամբ, գրելաձևով և
ստարակզու շարադրանքով XVIII դարի մեր մեմուարային գրականության
այդ եզակի նմուշի մտահղացման և երևան գալու պատմությունը, իր իսկ
Էմինի խոստովանությամբ, անբակտելիորեն կապված է Կալկաթայի գերա-
զույն դատարանի անդամ, նշանավոր արևելագետ, իրավագետ, 1770-ական
թթ. Անգլիայում ընտրական սիստեմի դեմոկրատացման համար մղվող պայ-
քարի գործուն մասնակից Ուիլյամ Զոնսի հետ։ Զոնսի գործունեությանը և հա-
յացքներին մոտիկից ծանոթանալը օգնում է պարզաբանելու Էմինի կյանքի
վերջին տարիներին վերաբերող որոշ հանգամանքներ, անգլիական, ռադիկա-
լիզմի նորագույն դրույթներին Էմինի տեղյակության աղբյուրները և նրա
հուշապատումի ստեղծման պատմությունը։

Ուիլյամ Զոնսը (1746—1794) ծնվել է Լոնդոնի համալսարանի մաթեմա-
տիկայի դասախոսի, Թագավորական ընկերության² անդամի ընտանիքում։
Սովորել է Հարրոուի փակ դպրոցում, այնուհետև Օքսֆորդի համալսարանում։
Հենց այստեղ էլ նա սկսել է հետաքրքրվել արևելագիտությամբ և կարճ ժամա-
նակում տիրապետել է պարսկերեն և արաբերեն լեզուներին։ Համալսարանի
ավարտելուց հետո Զոնսը իրավագիտություն է ուսումնասիրել, միևնույն ժա-
մանակ չի թողել իր արևելագիտական հետազոտությունները։ Նրան հանձնա-
րարվել է Դանիայի Թագավոր Քրիստիան VIII-ի համար թարգմանել «Նադիր
շահի պատմության» պարսկերեն ձեռագիրը։ Այնուհետև նա գրել է «Պարսկե-
րեն լեզվի քերականությունը»։ 1772 թ. Զոնսը ընտրվում է Թագավորական
ընկերության անդամ և նրա առջև բացվում են քչերին մատչելի Սեմյուել Զոն-
սոնի գրական ակումբի դռները։ Այստեղ նա հանդիպում է Օ. Գուլդսմիթի,
Զ. Ռեյնոլդսի, Է. Բերքի, Դ. Գարրիկի և այլ նշանավոր անձանց հետ։

Երիտասարդ հասակից արդեն Զոնսը դրսևորել է հայացքների ժնկախու-
թյուն։ Նրա երիտասարդությունը համընկավ բուրժուական ռադիկալիզմի վե-
րելքին։ Զոնսը սահմանադրական միապետության, քաղաքական ազատու-
թյունների կողմնակից էր, Լոկկի և Միլտոնի երկրպագուն։ Նա առաջ քաշեց
ժողովրդական աշխարհազորի գաղափարը, որը շափազանց համարձակ էր
նույնիսկ իր համախոհների համար։

Ռեֆորմի շարժման պատմության մեջ Զոնսը մտավ «Պետական կառա-
վարման սկզբունքները» պամֆլետով³, Բենջամեն Ֆրանկլինը, որին Զոնսը
Փարիզում ծանոթացրեց իր աշխատությանը, համաձայն էր նրա շատ դրույթ-
ներին։ 1776 թ. հիմնված «Սահմանադրական ինֆորմացիայի ընկերությունը»

¹ The Life and Adventures of Joseph Emlin an Armenian, written in English by
himself. London, 1792 (այսուհետև՝ Life of J. Emlin, մեջբերումները 1918 թ. վերա-
հրատարակությունից)։

² Թագավորական ընկերությունը հիմնադրվել է 1758 թ. որպես ճշգրիտ գիտությունների
ակադեմիա։

³ W. Jones. The principles of a government in a dialogue between a gentleman
and a farmer. London, 1782.

10 000 տպաքանակով հրատարակեց և ձրիաբար տարածեց Ջոնսի պամֆլետները: Երբ այն լույս տեսավ, հրատարակիչը դատական պատասխանատվության կանչվեց: Դատավարության ժամանակ Ջոնսին մեղադրեցին «հեղինակությունների տապալման» մեջ: Սակայն դատը միայն նպաստեց նրա պամֆլետի հաջողությանը, որը ինքը վերահրատարակություն ունեցավ: Ջոնսը պահանջում էր ընտրական իրավունք տալ բոլոր քաղաքացիներին՝ կոչ անելով ժողովրդին զինվել սեփական իրավունքները պաշտպանելու համար և պայքարել Եմի խումբ լորդերի ու հարուստների դեմ, որոնք իրենց են ենթարկել թագավորին և պառլամենտը: Իր «Պառլամենտի ռեֆորմի մասին» ճառում (1782 թ.) Ջոնսը պահանջել է ընտրական իրավունքները ընդլայնելու միջոցով ոչնչացնել ֆեոդալիզմի մնացուկները⁴:

Անգլիական սահմանադրական միապետության կողմնակից լինելով հանդերձ, Ջոնսը գտնում էր, որ այն էական բարեփոխությունների կարիք ունի: Նրա ողջ համակրանքը ապստամբած ֆրանսիացիների և ամերիկացիների կողմն էր, որոնք, ըստ նրա, «զինվել են բռնատիրական լծից աղատվելու համար»: Ընս ամբողջ հոգով հաջողություն եմ ցանկանում ֆրանսիացիներին,—գրել է նա 1791 թ.,—և հանգիստ հոգով կհեռանամ այս աշխարհից, եթե տեսնեմ բոլոր բռնակալությունների վերջը⁵: Երբ պառլամենտական ընտրությունների ժամանակ Օքսֆորդի կողմից առաջադրվեց Ջոնսի թեկնածությունը՝ հաղթեց նրա մրցակիցը: Նրա կենսագիրը այն կարծիքին է, որ Ջոնսը որոշ թվով ձայներ կորցրեց իր քաղաքական հայացքների պատճառով⁶: Այդ պարտությունից հետո Ջոնսը որոշեց մեկնել Հնդկաստան՝ Բենգալի գերագույն դատարանի անդամի պաշտոնով:

Հնդկաստանը նրան զայթակղում էր երկու նկատառումով: Նա հնարավորություն էր ստանում խորանալ արևելագիտական իր հետազոտություններում և ձեռք բերել նյութական և պաշտոնեական անկախություն: Մեկնելով Հնդկաստան Ջոնսը կազմել էր արևելագիտական հետազոտությունների ընդարձակ ծրագիր: Նրա մեջ մտնում էր Հնդկաստանի պատմության, աշխարհագրության, ճշգրիտ և բնական գիտությունների, ինչպես նաև ընդհանրապես արևելյան ժողովուրդների պոեզիայի, բարձրերի, երաժշտության, կրոնի ուսումնասիրությունը:

Հնդկաստանում ապրած տարիները նրա համար շատ բեղմնավոր եղան: Արևելքի մշակույթը պեղելու փորձեր արվել էին նրա ժամանելուց առաջ էլ, սակայն Ջոնսը նոր շունչ տվեց այդ գործին, շատ շուտով գալով այն եզրակացության, որ արևելագիտական հետազոտությունների իր ծրագիրը մի մարդու ուժերից վեր է և հնարավոր է իրագործել միայն «շատերի միացյալ ջանքերով»: Նա մտահղացավ ստեղծել Արևելագիտական հետազոտությունների ընկերություն, որի առաջին նիստը տեղի ունեցավ 1784 թ. հունվարի 15-ին: Ջոնսը ընդգծում էր Հնդկության պրագմատիկ նպատակադրումը: Եվրոպացիները իրենց ազատ ժամանակը կարող են տրամադրել Հնդկաստանի օրենքների, կրոնի, գրականության, պատմության, լեզուների, բնական հարստությանների ուսումնասիրությանը, ինչը, վերջին հաշվով, պետք է նպաստեր նոր կայսրությունը կառավարելու մեթոդների կատարելագործմանը: Դա գիտակցում էին նաև նահանգապետ Ու. Հաստինգսը և բոլոր նրա հետնորդները (Մակֆերսոնը, Կորնուոլիսը, Շորը և մյուսները), որոնք հանդես եկան ընկերության հովանավորողների դերում:

Հնդկությունը սկսեց հրատարակել «Ասիական հետազոտություններ» ամսագիրը: Դա առաջին եվրոպական ամսագիրն էր, որը տպագրում էր հնդիկ գիտնականների աշխատությունները: Այն եվրոպայում համընդհանուր ուշա-

⁴ The works of Sir W. Jones, 6 vols, London 1799, v. IV, p. 569—576.

⁵ Նույն տեղում, էջ 714—724:

⁶ Նույն տեղում:

⁷ S. N. Mukherjee. Sir William Jones: A Study in Eighteenth-century British Attitudes to India. Cambridge, 1968, p. 66.

գրությունն արժանացավ: Հույս ընծայվեցին նրա բոլոր համարների թարգմանությունները եվրոպական լեզուներով:

Տասր տարիների ընթացքում Ջոնսը շատ ուժ գործադրեց Հնդկությունը պահպանելու համար: Դա հեշտ չէր: Հնդկաստանում ապրող անգլիացիների մեծ մասին Հնդկության գործունեությունը չէր հետաքրքրում: Նրանց զբաղեցնում էին նորությունները պատերազմի, Բիսիու Սուլթանի մասին, առևտրական գործարքները և այլն: Եվ թեև Հնդկության անդամների թիվը 1792 թ. հասել էր 110-ի, նրա նիստերին սովորաբար ներկա էր լինում 15 մարդուց ոչ ավելի: Սակայն կրթված մարդկանց այդ փոքրաթիվ խումբը հսկայական գործ կատարեց: Ինդոլոգիայի սկզբնավորումը սովորաբար կասկած են Հնդկության ստեղծման հետ, և Ջոնսը համարվում է «ինդոլոգիայի հայրը»: Դասագրքերում նա մասնավորապես փառաբանվում է Հնդկավրոպական լեզուների ծագման ընդհանրության հայտնագործության, «Սակունտալայի» թարգմանության ու եվրոպացիներին սանսկրիտերեն գրականության հետ ծանոթացնելու համար:

Սկզբնապես Ջոնսին քիչ էր հետաքրքրում լեզուների ուսումնասիրությունը որպես այդպիսին: Նրա «Պարսկերեն լեզվի քերականությունը» պետք է ձեռնարկ ծառայեր արևելքում գտնվող անգլիացիների համար: Իրավաբանական գործունեությունը Հնդկաստանում ստիպեց նրան ուսումնասիրել և սանսկրիտերենը: Սակայն ուսումնասիրելով այն, նա անմիջապես գնահատեց այդ լեզվի ճկունությունն ու հարստությունը և ի հայտ բերեց նրա նմանությունը ուրիշ եվրոպական լեզուների հետ: «Սանսկրիտերենը,—գրել է Ջոնսը,—չնայած նրա հնագույն լինելուն, արտառոց կառուցվածք ունի, ավելի կատարյալ, քան հունարենն է, ավելի հարուստ, քան լատիներենը և ավելի նրբաճաշակ, քան որևէ մի այլ լեզու: Ուսումնասիրելով բոլոր երեքի բառերը՝ լեզվաբանը չի կարող չհամոզվել, որ նրանք բոլորն էլ առաջացել են մի ընդհանուր արմատից, որը երևի այլևս գոյություն չունի»⁸: Այս հաճախ կրկնվող հատվածը հենց համարում են պատմական լեզվաբանության սկիզբը: Ջոնսը, իհարկե, առաջինը չէր, որ նկատեց այդ լեզուների նմանությունը, սակայն նա իր հայտնագործությունը կատարել է անկախ իր նախորդներից և առաջինն է հրապարակել այն: Նա բացահայտել է նաև հնդկական և հունական դիցաբանության մեջ եղած ընդհանրությունը և գրել, որ այդ ժողովուրդները «երկրպագել են նույն աստվածներին տարբեր անունների տակ»:

Ուսումնասիրելով Հնդկաստանի պատմությունը, Ջոնսը ճշտեց բազմաթիվ փաստեր, շխարհագրական տեղանուններ, բնակավայրերի հնագույն անուններ: Իր գործընկերների հետ նա վերծանեց շատ հին արձանագրություններ: Ջեյմս Ստյուարտ Միլը քննադատել է Ջոնսին հնդիկների մասին նրա ունեցած իբրև թե չափազանցված պատկերացումների համար: Իր «Բրիտանական Հնդկաստանի պատմության» մեջ նա գրել է, որ արևելագետը, իբր, ունեցել է պատրանքներ և որ Հնդկաստանի մասին նրա դատողություններին պակասել է քննադատական վերաբերմունքը, որ արաբների և հնդկացիների կյանքի նրա նկարագրությունները գերազանցում են «վայրենիների երջանկության և առաքինությունների ուսսոսյական գովերգություններին»⁹: Նրա կարծիքով Ջոնսը պարտություն է կրել Հնդկաստանի պրոբլեմների լուծման հարցում: Միլը գտնում էր, որ Ջոնսի դատողությունները ճանապարհ հարթեցին Արևելքի մասին ռոմանտիկական պատկերացումների տարածման համար:

Ջոնսի կենսագիր Մուքերջին Միլի քննադատական դիտողությունները բացատրում է նրանով, որ ռոմանտիզմի դարաշրջանից հետո, երբ ռոմանտիկները իրենց հայացքը դարձրել էին գեպի «սպիրիտուալ» Հնդկաստանը, Բեն-

⁸ E. J. Hobsbawm. The Age of Revolution, Europe 1789—1848, London, 1962 p. 236.

⁹ J. S. Mill. The History of British India. V. II, London, 1818, p. 138—140.,

տամի և Միլի նման ռացիոնալիստները բնականաբար երես դարձրին այդ երկրից¹⁰:

Կարծում ենք, որ Միլը հանդես է եկել ոչ այնքան որպես հակառուսադավաճողական տրամադրությունների կրող, որքան որպես անգլիական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի գաղափարախոս: Իր գրքում Միլը ձգտել է փառաբանել Հնդկաստանի բրիտանական կառավարումը և այդ պատճառով իր առջև խնդիր չի դրել գովերգելու տեղական ժողովրդի մշակույթը, բարքերը և սովորույթները: Ընդհակառակը, նրա աշխատության մեջ միտում կա լուսնային մատենել և կամ նսեմացնել իրենց՝ հնդիկների բոլոր նվաճումները: Միլը այն կարծիքին էր, որ Հնդկաստանի պատմության հետազոտությունը պետք է ծառայի Բրիտանիայի այնտեղ վարած քաղաքականության խնդիրներին: Նրա «Հնդկաստանի պատմությունը» — գրել է Վինոգրադովը, — աչքի է ընկնում գիտական ցածր մակարդակով: Միլը Հնդկաստանում չի եղել, չի իմացել երկրի լեզուները և ծանոթ չէր հնդկական սկզբնաղբյուրներին: Նա այն կարծիքին էր, որ ինֆորմացիայի առատությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ պատմաբանի համար, որ պետք է մշակել փիլիսոփայական և ոչ փաստական գիտելիքները¹¹: Միլը պնդում էր, որ երբ անգլիացիները ղավթել են Հնդկաստանը, նրա ժողովուրդները ըստ էության բարբարոսական վիճակից դեռ դուրս չէին եկել: Անգլիացի գաղութարարներին նա պատկերել է որպես քաղաքակրթություն տարածողների և արդարացրել նրանց բռնությունները: Մինչդեռ Ջոնսը պատկանել է այն առաջադեմ, լուսավորյալ անգլիացիների թվին, որոնք ազատ էին ռասայական նախապաշարումներից, ինքնագոհ գոռողամտությունից:

Գիտական անաչառությունը նրան բերել էր այն համոզման, որ Հնդկաստանը գերազանցում է Եվրոպային մտքի շատ ասպարեզներում: Նա բարձր էր գնահատում հին հնդկական գրական հուշարձանների գեղարվեստական արժանիքները, գտնում էր, որ Կալիդասան հավասար է Շեքսպիրին և՛ որպես դրամատուրգ, և՛ որպես պոետ:

Սանսկրիտերեն գրականության Ջոնսի թարգմանությունները կարդացել է Անգլիայի գրողների մեծ մասը, և դրանց ազդեցությունը ակնհայտ է ումանտիկ պոետների ստեղծագործություններում (Շելլի, Թեննիսոն): Բայրոնը բազմիցս վկայակոչել է Ջոնսի աշխատությունները: Ջոնսի երախտիքը նրանում է, որ նա հետաքրքրություն արթնացրեց դեպի հնդկական գրականությունը: «Շեքսպիրի Ջոնսի աշխատությունների և թարգմանությունների Եվրոպյան առաջին անգամ պատկերացում ստացավ սանսկրիտերեն գրականության որոշ գանձերի մասին, — գրել է Զավահարյալ Ներուն, — Հնդկաստանը պարտական է Ջոնսին և ուրիշ այլ եվրոպացի գիտնականների, որոնք ի հայտ բերեցին նրա անցյալի գրականությունը»¹²:

Ջոնսը կիսել է Վոլտերի հիացմունքը արևելյան կուլտուրայի և «արևելյան իմաստության» վերաբերյալ: Նա կարծիք է հայտնել, որ Պլատոնը և Պյութագորասը իրենց փիլիսոփայական գաղափարները փոխառել են Հնդկաստանից, որ Նյուտոնի ողջ տեսությունը կարելի է գտնել «Վեդաներում»: Ջոնսը ցույց տվեց, որ Հնդկաստանը կանխել է եվրոպային թվաբանության, երկրաչափության և տրամաբանության ասպարեզներում, որ Հնդկաստանը կարող է հպարտանալ երեք հայտնագործություններով՝ հաշվարկման տասնորդական համակարգով, շախմատով և քերականության մասին գիտությունը¹³:

Սակայն Ջոնսը այն կարծիքին էր, որ եթե Ասիան գերազանցում է Եվրոպային երևակայության ոլորտում, ապա «բանականությունը և ճաշակը եվ-

¹⁰ S. N. Mukherjee. Op. cit., p. 111.

¹¹ К. Б. Виноградов. Очерки английской историографии нового и новейшего времени. Л., 1959, с. 20.

¹² Д. Ж. Неру. Открытие Индии. М., 1955, с. 338.

¹³ W. Jones. 'On the Indian game of chess.—Asiatic Researches, v. II, p. 159.

րոպական մտքի առավելություններն են կազմում»¹⁴։ «Ասիան պատկերացում անգամ չի ունեցել ազատության մասին, մարդկային իմաստության այդ մեծագույն նվաճումը իր մարմնավորումն է գտել բրիտանական սահմանադրության մեջ»։ Ջոնսը գտնում էր, որ Հնդկաստանը և Ասիայի մյուս ժողովուրդները հաջողություններ են ունեցել մարդկային մշակույթի շատ ասպարեզներում, հատկապես դրականության և փիլիսոփայության մեջ, սակայն հետ են մնացել կառավարման բավարար կարգ ստեղծելու հարցում։ Ժողովուրդներն այստեղ ելրեք քաղաքական ազատություններ չեն ունեցել և կառավարվել են բացարձակ միապետությամբ։ Նա երազում էր Հնդկաստանում տեսնել բրիտանական կառավարչաձև, որը ղեկավարվեր հնդկական քաղաքացիական օրենքներով։

Իր կյանքի վերջին տարիներին Ջոնսը զբաղված էր Հնդկաստանի օրենքների թարգմանությամբ, սակայն մահը խանգարեց ավարտել այդ գործը։

Կալկաթայում Ջոնսը հեռու էր մնում տեղի անգլիական միջավայրից։ Իր աղատ ժամանակի մեծ մասը նա անց էր կացնում բրահմինների հետ, զրուցելով հնդկական գրականության, փիլիսոփայության և դիցաբանության մասին և հայտնաբերելով անելով նրանց եվրոպական մտքի նվաճումներին։ Այս առումով Ջոնսը սարքերով էր մյուս անգլիացիներից, որոնք այն կարծիքին էին, որ «անգլիական կառավարող դասը իր վարկը պետք է բարձր պահի՝ խույ՝ տալով բնիկների հետ շփվելուց, պարփակվելով սեփական շրջանակում, առնչվելով միայն բարձր հասարակության հետ»¹⁵։ Ջոնսը բարեկամական կապեր հաստատեց տեղի գիտնականների հետ, որոնցից էին սանսկրիտերենի նրա ուսուցիչ-Ռամբլու խանը, անվանի պատմաբան Գուլյամ Հուսեյնը և ուրիշներ։

Ջոնսը նպատակադրվել էր մինչև Անգլիա վերադառնալը լինել Չինաստանում և Ամերիկայում։ Նա երազում էր Անգլիա վերադառնալ Պարսկաստանի և Թուրքիայի վրայով։ Սակայն Կալկաթայի կլիման քայքայեց նրա առողջությունը։ 1794 թ. ապրիլին Ջոնսը վախճանվեց։ Նրա թաղման արարողությունը շատ հանդիսավոր էր։ Ֆորտ Ուիլյամից թնդանոթի համազարկեր տրվեցին։ Հնդկաստանում և Անգլիայում շատերը սգացին նրա մահը։

Ջոնսի Հնդկաստան ժամանելուց (1783 թ.) մեկ տարի հետո, 1784 թ. երկարատև շրջագայություններից Կալկաթա վերադարձավ և Հովսեփ Էմինը։ Կես տարի անց նա արդեն հաղորդում էր լոնդոնյան իր բարեկամուհի էլիզաբեթ Մոնտեգյուին, որ համարյա ամեն օր լինում է սըր Ջոնսի տանը և վախճանում է նրա իմաստուն հասարակությունը¹⁶։ Նրանց ծանոթության հաջորդ տասը տարիները երկուսի համար էլ շատ բեղմնավոր եղան։ Ջոնսը իրականացրեց արևելագիտական հետազոտությունների իր ընդարձակ ծրագիրը, իսկ Էմինը գրեց և լոնդոնում հրատարակեց իր հուշերի գիրքը։

Ըստ երևույթին Էմինը ծանոթացել էր Ջոնսի հետ այն ժամանակ, երբ ջանում էր վերականգնվել Արևելահնդկական ընկերության բանակի իր ծառայության մեջ։ Նրա առաջին հայցը՝ ուղղված նահանգապետ Մաքֆերսոնին, թվագրված է 1784 թ. ապրիլի 14-ով։ Այդ ընթացքում նա ստիպված է եղել դիմել նաև գերագույն դատարանին, ուր ծառայում էր Ջոնսը։ 1785 թ. օգոստոսին Էմինը գրել է Մոնտեգյուին. «Պարոն Մաքֆերսոնը շատ է ջանում պաշտպանել իմ շահերը... նրան օգնում է նաև սըր Ու. Ջոնսը»¹⁷։

Էմինը չէր կարող հենց առաջին պահից չգրավել Ջոնսի ուշադրությունը։ Մի տեղաբնակ, որը ոչ միայն երկար ժամանակ ապրել էր Անգլիայում, այլև սովորել էր անգլիական դպրոցում, այնուհետև Վուլիչի նշանավոր ուսուցչական ակադեմիայում, մասնակցել էր Անգլիայի եվրոպական պատերազմներին, որը ծանոթություններ էր հաստատել անգլիական մտավորականության և ազ-

¹⁴ Asiatic Researches, The Second Discourse, v. I. p. 407.

¹⁵ Д ж. Иеру. Указ. соч., с. 322.

¹⁶ Life of J. Emin, p. 486.

¹⁷ Նույն տեղում, էջ 480—483.

ներվականության շատ անվանի դեմքերի հետ: Պարզվեց, որ նրանք շատ ընդհանուր ծանոթներ ունեն:

Էմինը, իր բնազդական հակումով դեպի ակնառու ինտելեկտի տեր մարդիկ, ի դեմս Ջոնսի գտավ մի համախոհի և խորհրդատուի, որը ոչ միայն իր երկրի ամենակրթված, առաջադեմ, գիտուն մարդկանցից էր, այլև Հնդկաստանում անգլիական գաղութի զարդը: «Ես սիրահարված եմ նրա բարյացակամ սրտին և հոգու վեհությանը,—գրել է Էմինը է. Մոնտեգյուին 1788 թ. ամռանը,—նրա միտքը նման է իմ թանկագին բարեկամ է. Բերքի մտքին, իսկ իմ նվիրվածությանը հանդեպ ինձ և սիրալիրությանը սրբո Ջոնսը շատ է հիշեցնում իմ հովանավորուհի-տիրուհի Մոնտեգյուին»¹⁸: Ի պատիվ Էմինի պետք է ասել, որ նա կարողացավ լիապես գնահատել Ջոնսի արժանիքները, գիտակցել նրա կուլտուր-լուսավորական և գիտական գործունեության նշանակությունը Հնդկաստանում: «Կալկաթայում,—գրել է նա Մոնտեգյուին,—շնորհիվ սրբո Ու. Ջոնսի անդադրում հետազոտությունների, արվեստների և գիտությունների ծաղկում ապրեցին: Նա իր երկրի պարծանքն է, այո՛, նա նրա փառքն է»¹⁹: Ջոնսը, փարելի է ասել, իր ավարտին հասցրեց Հ. Էմինի քաղաքական կրթության գործը: Մինչև Ջոնսի հետ ծանոթանալն Էմինը Անգլիայում ապրած տարիներին արդեն դարձել էր սահմանադրական միապետության և քաղաքացիական ազատությունների կողմնակից և է. Բերքի ու առաջադեմ մտավորականության այլ ներկայացուցիչների հետ ունեցած շփման միջոցով յուրացրել եվրոպական լուսավորիչների և անգլիական բուրժուական ռադիկալիզմի շատ գաղափարներ: Սակայն Ջոնսն էր, որ նրան ծանոթացրեց 1760—70-ական թթ. առավել մարտական քաղաքական տեսություններին: Նրանց մտերմությունը նպաստել էր նաև այն, որ լինելով գաղափարի մարդ, Էմինը հեռու էր առօրյա ճղճիմ հետաքրքրություններից և իր կյանքի իմաստը, գրել-խավոր նպատակը հայ ժողովրդի ազատագրության գործին ծառայելու մեջ էր տեսնում:

Էմինի կյանքի պատմությանը և քաղաքական ծրագրերին ծանոթանալուց հետո, Ջոնսը գտնում էր, որ նրա անցյալ գործունեությունը արժանի է հիացմունքի և ընդօրինակման: ՄաքՖերսոնին հասցեագրված նամակում Ջոնսը գրել է. «Ես ձեզ երախտապարտ եմ Էմինի նկատմամբ ցուցաբերած ձեր բարի վերաբերմունքի համար և կիսնդրեի նույնը անել այժմ: Շատերն Անգլիայում Ձեզ նույնպես շնորհակալ կլինեն: Նա հիանալի անձնավորություն է և եթե հարկ լինի, նա չի խուսափի մարտի ամենավտանգավոր տեղում գտնվելուց»²⁰:

Ջոնսը համակրանքով էր վերաբերվում Էմինի քաղաքական ծրագրերին: «Եթե Ձեր նպատակն էր մեր սահմանադրությունը փոխադրել Հայաստան, ևս ի սրտե ցավում եմ ձեր ձախողման համար: Այդօրինակ ծրագիրը ես համարում եմ վերին աստիճանի գովելի,—գրել է նա Էմինին»²¹: «Կան անգլիացիներ,—գրում է Էմինը իր գրքի առաջաբանում, որոնք ուրախանում են և իրենց երջանիկ են զգում, երբ լսում են որևէ մի ժողովրդի ստրկությունից ազատագրվելու մասին: Երբ նրանց իսկ հայրենակիցները՝ Ամերիկայի գաղութականները ապստամբեցին, ցավալից հանդերձ նրանց և մետրոպոլիտայի միջև առաջացած խզման համար, նրանք իրենց գոհունակությունն էին արտահայտում այն բանից, որ ամերիկացիները անկախություն նվաճեցին»²²: Այստեղ Էմինը, իհարկե, առաջին հերթին նկատի ուներ Ջոնսին:

Ըստ Ջոնսի հայերի համար գերադասելի պետք է լիներ «ազատ քաղաքացիների» վիճակը, այդ իսկ պատճառով նա գտնում էր, որ սահմանադրական միապետությունն է նրանց համար կառավարման ամենանպատակահարմար ձևը:

¹⁸ Նույն տեղում, էջ 437.

¹⁹ Նույն տեղում, էջ 495.

²⁰ Նույն տեղում, էջ 21.

²¹ Նույն տեղում.

²² Նույն տեղում, էջ XXX.

Ջոնսի կենսագիրը՝ հնդիկ անվանի գիտնական և քաղաքական գործիչ Մուքերժիին, անհետևողականություն է տեսնում այն բանում, որ «անգլիական օրենքների տեղափոխությունը հայկական միջավայր Ջոնսը համարում էր ցանկալի, թեև հայերը նույնպես արևելյան մի ժողովուրդ են, այնինչ նա չէր խրախուսում անգլիական քաղաքական կարգը Հնդկաստան տեղափոխելը»²³։ Սակայն համարում էր արդյոք Ջոնսը հայերին արևելյան ժողովուրդ։ Մենք դիտենք, որ Ջոնսը ժողովուրդների և ցեղախմբերի միջև նշած նմանությունը և ասարկությունը որոշում էր նաև կրոնի, փիլիսոփայության, արվեստի և ճարտարապետության նուշարձանների միջոցով։

Այդպիսով Հնդկաստանում ավելի քան տասը տարի և բարձր պաշտոն զբաղեցնելով գերագույն դատարանում, Ջոնսը հնարավորություն ունեցավ մոտիկից առնչվել հայերի հետ, որոնք կալվաթալում բարգավաճող գաղթօջախ ունեին։ Էմինից բացի նա ի պաշտոնն շփվել է ուրիշ հայերի հետ ևս։ Ջոնսը նամակներից մեկում հիշատակում է իր գրասենյակի «հայ գրագիրներին» (կլերկներին), որոնք շնորհիվ պարսկերեն (որը Հնդկաստանի պաշտոնական լեզուն էր մինչև 1838 թ.) և անգլերեն լեզուների իրենց իմացության ներգրավվել էին Բնկերության ծառայության տարբեր ոլորտներում։

Էմինի հետ Ջոնսի հանդիպումները և զրույցները նրան հնարավորություն էին տվել ծանոթանալ հայերի պատմական ճակատագրին, նրանց ողբերգական վիճակին արևելյան բռնատիրական լծի պայմաններում և ազատագրական ձգտումներին։ Էմինից նա անշուշտ տեղեկություններ էր ստացել հրեկահայ գաղթի առաջացման, նրա վիճակի, մշակութային կյանքի, հայ գործիչների կուլտուր-լուսավորական ձեռնարկումների վերաբերյալ։ Ըստ երևույթի էմինը Ջոնսին պատմել է նաև Մադրասի հայ համայնքի ինքնավարության սասին, որն իրենից ներկայացնում էր Արևելքի համար բացառիկ մի երևույթ, մի իրական փորձ, կյանքում կենսագործելու ժողովրդի ինքնավարության, բոլոր քաղաքացիների իրավական հավասարության և ազատության սկզբունքը։ Այդ համայնքի գերագույն իշխանությունը «բոլոր ժողովրդի, համահավասար ժողովրդի» ընդհանուր ժողովն էր։ Գոյություն ունեին նաև համայնքի կանոնադրությունը՝ շարադրված Շ. Շահամիրյանի կողմից նրա «նշավակում» (1783 թ.)²⁴։

Էմինից Ջոնսը տեղեկացած էլիներ, որ հայ գործիչները ազատագրված Հայաստանի ապագան կապում էին այնպիսի հասկացությունների հետ, որ-պիսիք էին «սահմանադրությունը», «ժողովրդի ինքնավարությունը» և այլն։ Շահամիրյանի «Որոգայթ փառացում» նկարագրված էր ապագա հայկական հանրապետության պետական, օրենսդրական կառուցվածքը։ Նրա հեղինակը, մերժելով բացարձակ միապետության սկզբունքը, պահանջում էր, որ ժողովուրդն ինքը ստանձնի օրենսդիր մարմնի դերը, որ կայուն օրենքները և օրինականությունը պետության հիմքը հանդիսանան։ Շահամիրյանը վկայակոչում էր անգլիական սահմանադրական միապետությունը, հիշատակում էր հյուսիսամերիկյան ազատագրական պատերազմը և Ջորջ Վաշինգտոնին, բահահայտելով, այսպիսով, իր գաղափարական կապը եվրոպական լուսավորիչների և Անգլիայի ռադիկալների հետ։

Պետք է կարծել, որ այս ամենը հիմք է տվել Ջոնսին այն համոզմանը հանգելու, որ հայերը կարող են կազմավորել մի պետություն, որը ղեկավարվի անգլիական սահմանադրական միապետության սկզբունքներով։ Ջոնսը հրահրեց և խրախուսեց էմինին թղթին հանձնել հայերի ազատագրության նպատակին ծառայող բազմապիսի ձեռնարկումներով հարուստ, անշափ հետաքրքիր, արկածալից իր կյանքի պատմությունը։ Աշխատանքն ավարտելուց

²³ S. N. Mukherjee. Op. cit., p. 137.

²⁴ Տե՛ս Թ. Ավդալրեգյան. Շահամիր Շահամիրյանը և հնդկահայ համայնական ինքնավարությունը XVIII դարում.—Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1966, էջ 255—272.

հետո, 1789 թ. էմինը գրել է է. Մոնտեգյուին. «Բարի բարեկամների խորհրդով, մեծ դժվարությամբ, ես երկու և կես տարում գրեցի իմ կյանքի քառասուն տարվա պատմությունը: Եթե չլինեք սրբ Ջոնսի և նրա Խիկնոջ խրախուսանքը, ես երբեք նման մի գործ չէի ձեռնարկի»²⁵:

Ջոնսը հանձն առավ կարդալ էմինի ձեռագիրը և շտկել լեզվական անճշտությունները: 1788 թ. օգոստոսին նա գրել է էմինին. «Վերադարձնում եմ ձեր շարադրանքի վերջին մասը սրտանց շնորհակալությամբ այն հաճույքի համար, որ Ձեր ողջ աշխատանքը պատճառեց ինձ: Այն անչափ հետաքրքիր է... Ոճը ամբողջապես մնացել է Ձերը, որովհետև ես ուղղել եմ միմիայն լեզվական սխալները և ուղղագրությունը, որոնք անխուսափելի են անգլերեն գրված, ծագումով համադանցու գործում: Եվ քիչ չէ Ձեր երախտիքը այն բանում, որ դուք օգտագործել եք այդքան բառ մի լեզվով. որը այնքան տարբերվում է պարսկերենից և հայերենից»²⁶:

Ջոնսը վախճանվեց առաջին հայ պարբերականի՝ «Ազդարարի» երևան գալուց մի քանի ամիս առաջ²⁷: Նրա հանդիսավոր թաղումը, տեղի անգլիական սպորտբերականներում տպագրված մասնատված հանդեսները. որոնցում լիարկված էին նրա արժանիքները, գիտական վաստակը և այլն, չէր կարող աննկատ մնալ հնդկահայության կողմից: «Ազդարարի» որոշ նյութեր մեզ իրավունք են տալիս ենթադրելու, որ Ջոնսի ստեղծած Հնդկություն գործունեությունը արձագանքներ է գտել նաև հայկական միջավայրում: Այս իմաստով հետաքրքրություն են ներկայացնում ամսագրի հենց առաջին համարում տպագրված մի քանի նյութեր, որոնցում քննարկվում են լեզուների, մասնավորապես հայերենի առաջացման և դասակարգման հարցերը: Դրանցից է «Ազդարարի» առաջին համարում տպագրված Շամիր Սուլթանումյանի (Շահամիր Շահամիրյանի) թղթակցությունը: Դա պատասխան է Մադրասում բնակվող անգլիացի բժիշկ Ջեյմս Անդերսոնի հարցումին, որին հետաքրքրում էին հայերի ծագումնաբանության և հայերեն լեզվին վերաբերող խնդիրները:

Այս նամակից անմիջապես հետո ամսագրի խմբագիր Հ. Շամվոնյանը՝ դեմոկրատ էր իսպանացի աշխարհագրագետ Պետեր Մուրիլիոյի 1752 թ. Մադրիդում տպագրված աշխատությունից մի հատված, ուր կրկնված է Շահամիրյանի բերած նույն վարկածը՝ որ հայերը Հայաստանի բնիկներն են:

Հաջորդ, ավելի ծավալուն նյութը, որը բաղկացած է երկու մասից, նվիրված է պարսկերեն լեզվի ծագման հարցին և Պարսկաստանի պատմության մինչև թաթարական արշավանքը: Մեզ հայտնի չէ, թե ով է հոդվածի հեղինակը, սակայն կա ներքին կապ այս հոդվածի և նախորդ երկու նյութերի միջև: Այստեղ հեղինակը այն եզրակացություն է եկել, որ պարսիկները Հաբեթի սերունդը չեն «որպես ոմանք կարծեն», այլ Սեմի հետնորդները²⁸: Սա ուղղակի բանավեճ էր Ջոնսի հետ: Ջոնսը, ինչպես ասվեց, հանդիսացավ համեմատական լեզվաբանության հիմնադիրը: Հնդեվրոպական լեզուների ընդհանրությունը նա բացատրում էր այդ ժողովուրդների ծագման ընդհանրությամբ: Նա համաձայն էր ժամանակի ամենանշանավոր բուսաբան Լիննեյի հետ այն հարցում, որ մարդկությունը առաջացել էր աստծու կողմից ստեղծած մի զույգից: Ջոնսը հավատում էր ջրհեղեղին: Սակայն նա այն կարծիքին էր, որ ջրհեղեղից հետո Նոյի լեզուն անվերադարձո՞հն մոռացվել էր: Նրա ընտանիքը բնակություն էր հաստատել Իրանում, որտեղից նրա որդիները տարբեր կողմեր են գնացել: Նրա այս տեսակետները շարադրվել են «Ասիական հետազոտություններ» ամսագրի էջերում: Նրա 9-րդ «տարեկան զեկուլյցի» թեման էր «Ազգերի ծագման և ազգերի ընդհանրության վերաբերյալ»:

Ո՞րն է այս բանավեճի իմաստը: Ինչո՞ւ հնդկահայ գաղութի գործիչները, որոնք այնքան դուրընկալ էին ամեն մի նոր գաղափարի հանդեպ, այս պա-

²⁵ Life of J. Emin, p. 491.

²⁶ Նույն տեղում, XIX, XX.

²⁷ «Ազդարար», Մադրաս, 1794, № 1.

²⁸ Նույն տեղում, էջ 22.

րադայում հանդես եկան որպես նոր սեկնարանության հակառակորդներ։ Հարցը նրանում է, ինչպես մեզ թվում է. որ Ջոնսը Արարատյան երկրի ընդհանր էր համարում նաև ասորիկներին։ Մինչդեռ հայ գործիչների համար սեփական վարկածը մի ծանրակշիռ փաստարկ էր հօգուտ այն պատկերացման, որ հայերը, և միմիայն նրանք են հանդիսացել Արարատյան երկրի հնագույն ընդհանրը, ուր նրանք երազում էին նորից վերագտնալ և հաստատվել, ազատելով աղ երկիրը եկվոր նվաճողներից։

Ջոնսը հայաստանի օգնություն ցույց տվեց էմինին նաև նրա հուշապատումի հրատառակության դործում։ Ըստնի գրքի անգլիացի թատերականների²⁹ թվում են Ջոնսի հնդկաստանյան մի շարք գործերնեկեր-իրավաբանները, ինչպես Կալկաթայի գերագույն դատարանի անդամ Ո. Չամբերսը, դատավորներ Ջ. Էլիոտը, Մ. Թերները, Բ. Դեվիսը, Հ. Հայդը, Ջոնսի բարտուղարը՝ Հ. Թեքերը և ուրիշներ, հնդկության անդամներ Ու. Ֆրանկլինը, Ջ. Հարինգտոնը, ինչպես նաև տեղի անգլիական ստավորականության այլ ներկայացուցիչներ, թարգմանիչներ, ծառայողներ, եկեղեցականներ, զինվորականներ, որոնց մի մասի համար, անշուշտ, կարևոր էր Ջոնսի բարենպաստ կարծիքը էմինի անձի և նրա գրքի մասին։

Դրքին որպես առաջարկ ծառայեց Ջոնսի վերը նշված նամակը³⁰, որը նա ուղարկել էր էմինին սրբագրված ձեռագրի հետ սխառն և որն ամփոփում էր նրա դրական կարծիքը հնդկական շարադրանքի մասին։

ОВСЕП ЭМИН И АНГЛИЙСКИЙ ВОСТОКОВЕД УИЛЬЯМ ДЖОНС

М. М. АСЛАНЯН

Резюме

В 1792 г. в Лондоне были изданы мемуары выдающегося деятеля армянского национально-освободительного движения Овсеп Эмина. История появления этого уникального памятника армянской мемуарной литературы XVIII в. тесно связана с именем знаменитого востоковеда, «отца индологич», правоведа, деятельного участника борьбы за избирательную реформу в Англии—Уильяма Джонса (1746—1794).

В 1783—1794 гг. Джонс был членом Верховного суда Калькутты. В 1784 г. с ним познакомился вернувшийся после долгих странствий в Индию Овсеп Эмин. Последующие 10 лет их знакомства оказались очень плодотворными для них обоих: Джонс осуществил задуманную обширную программу ориенталистических исследований, Эмин написал и издал свою автобиографию.

Джонс завершил политическое и просветительское образование Эмина, начатое в Англии Э. Бэрком, Э. Литтлтоном, и др. Если в лондонский период жизни (50-е годы) Эмин усвоил основы английского конституционализма и просветительства, то в Индии в лице Джонса он встретил пропагандиста идей наиболее левого крыла английского радикализма 70—80-х годов, сторонника независимости американских колоний, французской революции, который одобрял его политическую программу освобождения Армении от ига восточных деспотий и установления там конституционных порядков. Джонс убедил Эмина написать историю своей жизни, которая, по его мнению, была достойна восхищения и подражания, и всячески поддерживал его в осуществлении этого замысла. Он же явился первым читателем и корректором английской рукописи книги Эмина и оказал существенную поддержку в деле ее издания.

²⁹ 74 թատերականներից, որոնց անվանացանկը տեղադրված է էմինի գրքի սկզբում. 61-ը անգլիացիներ են։ Նրանցից երեքը՝ Ու. Ջոնսը, Է. Մոնտեգյուն և Ու. Բրադլը Վինզական օրինակ են թատերադրադրվել։

³⁰ Life of J. Emin, XIX, XX.